ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 45–Ա

ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած ցուցակները և երկրապահ կամավորների միության Գյումրու տարածքային բաժանմունքի նախագահ Վարդան Սարգսյանի ներկայացրած գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի ապրիլի 13-ին համապատասխանաբար՝ NN 4094,4099 թվագրումներով)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես ծանր պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1)արցախյան պատերազմում (1991-1994թթ.) զոհված՝ թվով 105 (մեկ հարյուր հինգ) ազատամարտիկների ընտանիքներին, յուրաքանչյուրին 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2.100.000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 164 (մեկ հարյուր վաթսունչորս) զինծառայողների ընտանիքներին, յուրաքանչյուրին 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N2 հավելվածի,

3) արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ՝ թվով 18 (տասնութ) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 270.000 (երկու հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ՝ թվով 242 (երկու հարյուր քառասուներկու) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 10.000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2.420.000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 61 (վաթսունմեկ) վետերաններին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 915.000 (ինը հարյուր տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 35 (երեսունհինգ) վետերաններին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 525.000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի,

7) Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության տերիտորիայում մարտական գործողությունների ժամանակ զոհված՝ թվով 4 (չորս) զինծառայողների ընտանիքներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ

հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 60.000 (վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N7 հավելվածի,

8) Երկրապահ կամավորների միության անդամներ, սոցիալապես անապահով՝ թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N8 հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

30 ապրիլի 2015թ.
ք.Գյումրի